ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/27

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա. Պարանյանի (լիազորագիր՝ տրված 05.02.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1186-2021 գրությամբ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ դատական դեպարտամենտի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 25.01.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-252 գրության հիման վրա 01.02.2021թ. թիվ 26/26/1186-2021 գրությամբ նախաձեռնել է «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ն 15.02.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Դատական դեպարտամենտի կարիքների համար հայտարարվել է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրել է անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայում է հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշիվը /1-ին չափաբաժնի մասով/, ինչպես նաև գնային առաջարկը /Հավելված 2/ հաստատված է այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունը շտկելու համար նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:

Իսկ արդեն գնահատող հանձնաժողովի 15.01.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է՝ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը, 1-ին չափաբաժնի մասով ներկայացված հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշվի 16-րդ տողում՝ հետևաբար և Ընդամենը տողից սկսած բոլոր տողերում, առկա են թվաբանական անճշտություններ:

Դատական դեպարտամենտը՝ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատաս-խան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը միայն 26.01.2021թ.:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում

ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատաս-խանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ինչպես արդեն հայտնել ենք, Դատական դեպարտամենտի կարիքների համար հայտարարվել է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ն:

Սակայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրել է անհամապատասխանություններ, մասնավորապես.

Բացակայում է հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշիվը /1-ին չափաբաժնի մասով/, ինչպես նաև գնային առաջարկը /Հավելված 2/ հաստատված է այլ անձի

էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Այնուհետև նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունը շտկելու համար նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:

Իսկ արդեն գնահատող հանձնաժողովի 15.01.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է՝ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը, 1-ին չափաբաժնի մասով ներկայացված հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշվի 16-րդ տողում՝ հետևաբար և Ընդամենը տողից սկսած բոլոր տողերում, առկա են թվաբանական անճշտություններ:

Մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել էր միայն այն, որ ծավալաթերթ-նախահաշիվը հաստատված լրացված չէ և գնային առաջարկը հաստատված է այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, մինչդեռ հայտը մերժվել է այն հիմքով, որ ծավալաթերթ-նախահաշվի 16-րդ տողում՝ հետևաբար և Ընդամենը տողից սկսած բոլոր տողերում առկա են թվաբանական անճշտություններ /անհամապատասխանությունների շտկման արձանագրության մեջ վերը նշված հանգամանքի հետ կապված որևէ խոսք առկա չի եղել/:

Բացի այդ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշվել է, թիվ ՍՑ-ՆԳ-2021/27 ընթացակարգ նախաձեռնելու հիմքը առաջացել է 15.01.2021թ. (թիվ 5 արձանագրության 1.2 կետ)՝ հիմքում դնելով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Այսինքն՝ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 15.01.2021թ.–ին /թիվ 5 արձանագրության 1.2 կետ/, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը միայն 26.01.2021թ. հիմքում դնելով այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել՝ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Այնինչ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել դեռևս 15.01.2021թ.-ին և միայն 7 աշխատանքային օր անց Պատվիրատուն որոշում է կայացրել Ընկերության տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի

նշանակությունը օրենքներով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգեր /ՍՑ-ՆԳ-2019/195, ՍՑ-ՆԳ-2020/212 և այլն: Օրինակ՝ թիվ ՍՑ-ՆԳ-2020/212 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը.

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական

պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թեր մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավանորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը՝ այն է հինգ աշխատանքային օրվա ժամկետը: Ընդ որում՝ օրենսդրությունը չի նախատեսում նշված ժամկետը վերականգնելու ինստիտուտը, հետևաբար, տվյալ դեպքում հինգ աշխատանքային օրվա ժամկետի խախտման հանգամանքները չեն դիտարկվում:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ որոշեցի՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.08.2020թ. թիվ 26/26/12904-2020 գրությամբ «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/27 ընթացակարգի շրջանակներում 08.02.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 3-4 աշխատանքային օրով հետաձգել նիստը՝ հնարավորություն տալով Ընկերությանը նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնելու դիրքորոշում:

3. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատական դեպարտամենտը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.01.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-252 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ Ձեզ է ներկայացվում Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/04» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/27 ընթացակարգի շրջանակներում 08.02.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/27 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/27 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ ենթակետով արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման նպատակով հանձնաժողովը որոշեց ***<u>նիստը ընդմիջել մինչև 2021թ. հունվարի 18-ը՝ ժամը 14:00-ն:</u>***

3. Նույն արձանագրության 1.2-րդ ենթակետով արձանագրվել է, որ ուսումնասիրվել են «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը, սակայն 1-ին չափաբաժնի մասով ներկայացված հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշվի 16-րդ տողում, հետևաբար և «Ընդամենը» տողից սկսած բոլոր տողերում առկա են թվաբանական անճշտություններ, այնուհետև Ընթացակարգի գանահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, վերջինիս հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել է անբավարար և մերժել:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1186-2021 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 25.01.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-252 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի 15.02.2021թ. դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ՝ հաշվի առնելով հրավերին կցված

ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում՝ կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման

բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության 2.2-րդ ենթակետով արձանագրվել է, որ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշիվների, ինչպես նաև գնային առաջարկը (Հավելված 2) հաստատված է այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Նույն արձանագրության 3.8-րդ ենթակետով արձանագրվել է, որ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝

- 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկի (Հավելված 2), որի հաշվարկը սխալ է, ուստի հանձնաժողովը որոշեց «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը և 40-րդ կետի 4-րդ ենթակետը,
- գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված 1), որը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ էլեկտրոնային եղանակով տեղեկացնել Ընկերությանը՝ առաջարկելով մինչև սույն թվականի հունվարի 14-ը ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1-ին ենթակետով արձանագրվել է, որ մասնակիցների կողմից

ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման նպատակով հանձնաժողովը որոշեց ***նիստը ընդմիջել մինչև 2021թ. հունվարի 18-ը՝ ժամը 14:00-ն:***

Նույն արձանագրության 1.2-րդ ենթակետով արձանագրվել է, որ ուսումնասիրվել են «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը, սակայն 1-ին չափաբաժնի մասով ներկայացված հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշվի 16-րդ տողում, հետևաբար և «Ընդամենը» տողից սկսած բոլոր տողերում առկա են թվաբանական անճշտություններ, այնուհետև Ընթացակարգի գանահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, վերջինիս հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել է անբավարար և մերժել:

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերությամբ սահմանվում է, որ ***հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ՝*** հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/04» ծածկագրով ***ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանվել է ծավալաթերթ-նախահաշիվը***:

Ընթացակարգի հրավերի 2 կետի 2.6-րդ ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ***:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: ***Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5-րդ կետի 5.3-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից սույն գործի շրջանակներում տրամադրված «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից 13.01.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանության շտկման արդյունքում ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը, արձանագրում եմ, որ ծավալաթերթ-նախահաշվում նշված ընդամենը գինը՝ 7 219 600 ՀՀ դրամ, համապատասխանում է վերջինիս կողմից Հավելված 2-ով՝ գնային առաջարկով, 1-ին չափաբաժնի համար ներկայացված ընդհանուր գնին՝ 7 219 600 ՀՀ դրամին, սակայն ծավալաթերթ-նախահաշվի 16-րդ տողում առկա է թվաբանական անճշտություն, այն է՝ քանակ՝ 51,58, միավորի արժեք՝ 2000, ընդամենը՝ 87 686, մինչդեռ ընդամենը տողը ստացվում է 103 160, որի արդյունքում ընդամենը գինը (ներառյալ ԱԱՀ), Ընկերության կողմից ծավալաթերթ-նախահաշվով աշխատանքների իրականացման համար առաջարկված միավորի գները հիմք ընդունելով, ստացվում է 7 240 638 ՀՀ դրամ՝ առաջացնելով գնային առաջարկով ներկայացված ընդհանուր գնի նկատմամբ շուրջ 21 038 ՀՀ դրամի անհամապատասխանություն, հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում գնահատող հանձնաժողովը, կիրառելով Կարգի 42-րդ կետը և մերժելով վերջինիս հայտը, գործել է իրավաչափ:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ գտնում եմ, որ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ն «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/04» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից 15.02.2021թ. դիրքորոշմամբ ներկայացված այն դիտարկմանը, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը, այն է՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել դեռևս 15.01.2021թ.-ին և միայն 7 աշխատանքային օր անց (26.01.2021թ.) է Պատվիրատուն Ընկերության տվյալները ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար, ապա սույն մասով գտնում եմ, որ Ընկերության նման դիտարկումն անհիմն է, քանի որ գործում առկա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման նպատակով, այդ թվում նաև՝ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի, նիստը ընդմիջվել է մինչև 18.01.2021թ., հետևաբար, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը շարունակելով նիստը, փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 18.01.2021թ. նոր միայն որոշում է կայացրել «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ գործում առկա նյութերի համաձայն՝ ՀՀ դատական դեպարտամենտը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին է ներկայացրել 25.01.2021թ.՝ թիվ ԴԴ-3-Ե-252 գրությամբ:

Այսպես, Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝

համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել, երբ վերջինիս հայտը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և մերժվել է, այսինքն՝ 18.01.2021թ.-ից, իսկ Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, թիվ ԴԴ-3-Ե-252 գրությամբ ուղարկել է լիազորված մարմնին 25.01.2021թ., որպիսի պայմաններում արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1186-2021 գրությամբ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**